

Զ Ա Ի Ա Խ Ք

ՆՇԱՆԱԻՈՐ ՏՕՆԵՐ *)

ՆՈՐ-ՏԱՐԻ ԿԵՄ ԿԵՂԻՆՔ

Նոր-տարին մօտենալիս կանալք իրենց շահով տուած փողից վերցնում և իրենց ու իրենց երեխաների համար նոր հանգերձներ են պատրաստում, որովհետեւ գերդաստանը շատ հազիւ է պատահում, որ կանանց կամ երեխաների համար հանգերձներ անէ:

Նոր-տարու նախընթաց օրը առաւօտ վաղ տուն ու դուռը մաքրում իստակում են: Փոքր հարսը սովորականից աւելի խմոր է հունցում, և թոնիրը վառում: Անմիջապէս գալիս է ապլան և մախոխապուր դնում վերան, նոյն և ձիթով տոլմա, սիրքալի ու լոբի - միւս օրուայ համար: Երբ կերակուրը եփւում է, ասլան սկսում է մեծ հարսի հետ հաց թխել և երբ աւարտում է, սկսում է նոր-տարուայ համար պատրաստութիւն տեսնել: Նախ բաւականաչափ անի-սոնով բազաճ է թխում և լետոյ վերցնելով մի մեծ գունտ խմոր, աղօթում է. «Երկնաւոր Թագաւոր, դու բարով խերով տարի էնես, դու հալւորիս ու տղոցս, հարսներուս ու թու-ներուս հետ շատ տարիներու նէասիպ էնես, մէկու ճար աղջկանս ա մէ բարի դուռմ' բանաս: Յետոյ մի հատ մի կոպէկանոց խրում է խմորի մէջ, մի լաւ գնտում, և ապա

*) Տես Ազգագրական Հանդէս. Ա. գիրք. եր. 117—379.

բանում, երեսը ձեռքով նշխեր անում, ու քիշմիշով ու ընկուզով զարգարում: Յետոյ Յիսուս Քրիստոս ասելով դնում է այդ «տարին» հացառի վրայ և խփում թոնրի շուրջը:

Մինչդեռ ապլան տարին է պատրաստում, ամէն մի հարսը մի մի վասիլ (տիկնիկ) և մի մի քիսա (քսակ) է շինում խմորից և ընկուզով ու քիշմիշով զարգարում: Յետոյ նշաններ են անում, թէ այս ինչ վասիլը այս ինչ հարսի, և այս ինչ քսակը այս ինչ ամուսնունն է: Ապա մինը եզների համար մի լուծ է շինում, միւսը կովերի համար չորս պտուկ, երրորդը՝ հաւերի համար կրիչ—ջրի աման, չորրորդը՝ ցորենի համար հոր՝ մէջը ցորեն, գարու համար դարձեալ հոր, մէջը գարի, հինգերորդն էլ մի խնոցի իւղի համար: Յետոյ ապլան այս բոլորը խփում է թոնրի շուրջը և փայտերով ծածկում թոնիրը, որովհետեւ արդէն հովացած է լինում:

Միքիչ լետոյ գրեթէ ամբողջ գերդաստանը հաւաքւում է այդ թոնրի շուրջը և անհամբերութեամբ սպասում, թէ ինչ պատգամ պիտի լսէ այդ Պիւթեան հորից: Վերջապէս ապլան բաց է անում թոնրի բերանը և բոլորի հայեացքները ուղղւում են թոնրի մէջ և ուրախութեան աղաղակները հնչւում ամէն կողմից: Ապլան նախ հանում է «տարին» և ապա՝ քսակներն ու վասիլները. բայց այստեղ էլ պահւում է աւազութեան կարգը, նախ հանւում է գերդաստանի հոր, ապա մեծ որդու և այլն քիսաները, լետոյ մեծ հարսինը և այլն: Եթէ քսակները ուռած լինին, այդ նշան է, որ նրա տէրը այդ տարի պիտի հարստանայ, իսկ եթէ, ընդհակառակը, կուչ եկած լինի, աղքատանալու է: Եւ եթէ վասիլներն ուռչին, նրանց տէր հարսերը որդի են ունենալու: Մինչև անգամ զննում են ուռույցքը և եթէ ուռույցքը դէպի վեր է ուղղուած, ասում են արու երեխայ է լինելու, իսկ եթէ դէպի վայր՝ աղջիկ: Յորենի, գարու հորերի, լծի, խնոցու և կրիչի ուռչիւն էլ առատութեան, իսկ կուչ գալը սակաւութեան նշան է: Իսկ եթէ սրանցից մինը «կուտ է գնում», այսինքն թոնիրն է ընկնում, ասում են, թէ նրա տէրը մեռնելու կամ կորչելու է:

Նորն օրը երեխայ ունեցող կանայք Ծաղկամօր կիրա-
պին են պահում, որպէսզի երեխաները ծաղիկ չհանեն:

Երբ մթնում է, ապլաները մօխիւր են ածում դրսի դը-
ռան շէմքի վերայ, որպէսզի չար մտքով ներս մտնողները
էշ կարին: Մի մեխ էլ խփում են տան խաչերկաթին, որ-
պէսզի չարը (քաջք) չկարողանայ ներս մտնել, ալիւրով էլ
մի մի խաչ են նկարում դրսի դռան վերայ: Տան ծերունի-
ներն էլ իրենց պարապման մի լատկանիշ գործիք են նկա-
րում դրսի պատի վերայ:

Գիշերը մեծերը շուտով քնում են, իսկ երիտասարդնե-
րը սպասում են, որ կէսգիշերին գնան գետից ջուր բերեն,
որովհետեւ հաւատում են, թէ այդ գիշեր գետը մի Ժամ ոս-
կի է վազում: Պատմում են, թէ մի խուլ հարս մի անգամ
կաղնդի մի գիշեր գնացել գետից ջուր է բերել իւր կերսա-
րի ձեռին ածելու, վերջինս նեղացել է վերան, թէ ինչո՞ւ
սառուցի կտորներ է բերել, բայց լետոյ լուսին բռնել տե-
սել է, որ ոսկիներ են: Մի ուրիշն էլ դարձեալ ոսկի ածել
վերցրել է որ բերի տուն, ստտանաները ահագին աղմուկ են
բարձրացրել, թէ տարա՛ւ, բռնեցէք: Վախենալով լետ է
նայել, իսկոյն տմանը ընկել է ձեռքից, իսկ ինքն էլ տուն
ընկնելով ուշաթափուել է:

Անհամբերութեամբ սպասելով կէս գիշերին, երիտա-
սարդները նայում են կատուի աչքին. երբ բերը բոլորովին
կլորացած և մեծացած են լինում, ասում են, թէ արդէն
կէս գիշեր է և պատրաստոււմ են գետը գնալու: Մինը հեծ-
նում է ալիշը, միւսը շիշը, երրորդը՝ խաչերկաթը: Սրան-
ցից աւագը վերցնում է մի գիւգում՝ լի ցորենով, գարիով.
միւսներն էլ մի քիչ խոտ են վերցնում: Ահագին աղմուկով
գնում են գետի ափը, խոտը տակերը ցկում, վերան նստում
և սպասում, թէ երբ պէտք է գետը ոսկի վազէ: Երկար
սպասելուց լետոյ աւագը ասում է.

«Բեզի կուտամ ցորեն, գարի,

Դուն ա ինձի տու բարի,

Շնորհաւոր Նոր-տարի»:

Եւ գիւգիւմի ցորենն ու դարին տծում գետը, լցնում գիւգիւմը ջրով ու «տղաք քաշէք, ոսկի լցուաւ» ասում ու վողով տուն: Բոլորը վազում են տուն, աշխատելով լետ չնայել. նրանց թւում է, թէ սատանաները նրանց հետեւից ընկած են, թէ նրանք «բռնեցէք» են բղաւում և ավել: Տան մէջ սրանց դիմաւորում են տան մեծերը և շտապով ջուրը դատարկում մի ամանի մէջ, որ տեսնեն, թէ ոսկի չէ կտրել:

Երբ արշալոյսը սկսում է բացուել, ապւանները վեր են կենում, արթնացնում հարսերին, «տարի»-ները դնում սալանների մէջ, վերան մեղր ածում և ձեռքերին բռնած՝ հաստ գաւազանը քոթքոթացնելով՝ դուրս են ելնում, դառնում դէպի արեւելք, երեք անգամ ասում. «Մէօվլաթ, սարն էս, ձորն էս, արի տուն» և նորից քոթքոթացնելով մտնում ներս: Պահում են «տարի»-ները, իսկ վերայի մեղրը տանում բոլորին բաժանում, որպէսզի այդ տարին միմեանց հետ անուշութիւնով անցկացնեն:

Մեծ որդին իւր բաժին մեղրը ուտելով՝ տանում է երեք «բաղաճ» (իւղով պատրաստած հաց) գետում թրջում և բերում, մաս մաս անում, տալիս կենդանիներին, աւելացնելով դրանց վերայ և՛ լուծն ու պտուկները: Այսպիսով նա շնորհաւորում է կենդանիների նոր տարին և լարդի փոխաբէն խոտ տալիս:

Ապա հայրն ու մայրը նստում են օճախի գլուխը և որդիներն ու հարսերը աւագութեան կարգով գալիս համբուրում են սրանց ձեռքերը և նոր-տարին շնորհաւորում: Յետոյ ապլան նորահարսին մի ուռուպիա (ոսկի) է ընծայում, իսկ միւսներին միրգ և քիսաներն ու վասիլները բաժանում: Բոլորը ուրախութիւնով ընդունում են ապլայի տուածները և միմեանց նույն մրգերով կաղնղում: Տեգրները ևս իրենց նորահարսերին միրգ կամ ուրիշ բաներ են ընծայում, իսկ ամուսինները ամօթ համարելով ոչինչ չեն նուիրում իրենց կանանց, ո՛չ էլ շնորհաւորում:

Հայրը պատրաստուելով դուրս գնալ տանից, բերում

ձին կանգնեցնում է դոմի մէջտեղը, իսկոյն միւս տնեցիներըն էլ խմբւում են շուրջը և ուշադրութեամբ նայում, թէ ձին ինքնուրոյնաբար ո՞ր ոտը կը բարձրացնէ: Եթէ աջը բարձրացնէ՝ այդ նշանն է՝ որ այդ տարին լաջողութեամբ, իսկ եթէ ձախը՝ ձախողութեամբ պիտի անցնի: Աջը բարձրացնելիս հալըը իւր չափահաս որդկերանց հետ ուրախացած մի մի բաժակ օղի են խմում, վերալից էլ մի մի հատ զմի ուտում և դուրս ելնում: Մեծ մարդիկը նախ գնում են իրենց սգաւոր ազգականների և կամ դրկիցների տունը, միութարում նրանց, ապա մօտիկ ազգականներին հանդիպում և լետոյ մի մի շիշ օղի առած գնում են քահանային «տեսնելու»:

«Օրհնեա տէր», ասում են նրանք, ներս մտնելով քահանայի տունը:

— Աստուած օրհնէ, պատասխանում է քահանան: Եկողը անմիջապէս մօտենում է և համբուրելով քահանայի աջը՝ ասում.

«Ենորհաւոր նոր-տարի, ամէն տարի ուրախութենով աս օրս հասնինք»:

— Քուկդ ա շնորհաւոր, պատասխանում է քահանան, բարով խէրով շատ տարիներ աս օրս հասնինք. հրամմէ վեր նստի:

Բոլոր եկողները դարձեալ աւադութեան կարգով նըստում են և մի քիչ լետոյ քահանան նրանց մի մի բաժակ օղի է հրամցնում: Քահանայի օղին խմելուց լետոյ եկողները հանում են իրենց բերած շշով օղին, մի մի բաժակ իրենք խմում, մի մի բաժակ էլ բոլորին հրամցնում և մընացածը (եթէ միայն մնայ) տալիս են քահանայի տնեցիներին՝ որ դատարկեն և լետոյ շշերն առնում և գնում են տըները, որ լցնեն ու գնան նոյն կարգով տանուտէրին տեսնեն:

Պատահում է, որ շատերը հարբում են և անախորժ դէպքեր են տեղի ունենում:

Միւս օրը «բաղդ-փորձուկ» է, այսինքն բաղդը փորձե-

լու օր է: Երկտասարդներ ու աղջիկները նախընթաց օրը պատրաստած «ղառղռի կլիկները» — կլոր, փոքրիկ հացեր — դնում են կտուրները և կամ դէզերի վրայ և դիտում թէ ագռաւները վերցնում իր կողմն են տանում. որովհետեւ հաւատում են, որ այն կողմից պիտի գայ սպասելի փեսան կամ հարսնացուն:

Յետոյ գնում են իրենց բարեկամների տները և նայելով թէ ինչով կը հիւրասիրեն իրենց, գուշակում իրենց բաղդը: Ուրիշներ թաք են կենում գրկիցների տներում և լսածից գուշակութիւններ անում: Միքանիսն էլ բալանի դնելով գրպանները՝ լուռ կանգնում են փողոցներում և անցուդարձ անողների խօսակցութիւններից գուշակութիւններ տանում:

Երկու օր լետոյ, լունուարի 4-ին, երեկոյեան ապլաները կտրում են տարին, բաժանելով տան բոլոր անդամների և նոյն իսկ կենդանիների մէջ: Ում բաժնի միջից որ դուրս գայ գրամը, այդ տարի նա է բաղդաւոր լինելու և կամ նրանից է բաղդաւորութիւնը գալու:

Քրիստոսի ծննդեան և մկրտութեան տօներին զուտ եկեղեցական ծիսակատարութիւններից զատ մի առանձին, ուշագրութեան արժանի բան չի կատարուում:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Առաջաւորաց պատին ժողովուրդը Ս. Սարգսի պատ է կոչում և շաբաթ օրը հանգիստով տօնում նրա տօնը: Այս հինգ օրուայ ընթացքում լինում են մարդիկ, որ օրական միմիայն մի քիչմիշ են ուտում և կամ անսրւաղ ծոմ են պահում. ուրիշներ էլ օրական միայն մի անեկ հացով են բաւականանում, իսկ ընդհանրապէս ժողովուրդը միայն պատ է պահում, ուտելով աւելուկ, դմի, բանճար, բոդկ և մախոխ ապուր, միայն թէ մինչև ճաշ պէտք է ծոմ պահեն:

Ժողովուրդը բաւական ջերմեռանդութեամբ եկեղեցի է դնում, մանաւանդ ուրբաթ երեկոյին և շաբաթ առաւօտեան: Նանապարհին ժամուորներից շատերը պըծեցնում են իրենց մագերից և քամուն տալիս, որպէսզի Ս. Սարգիսը իրենց չուռն ու ցաւն էլ այդ մագերի հետ տանի:

Այդ հինգ օրուայ ընթացքում կանայք, մանաւանդ աղջիկները գլուխ չեն լուանում, որպէսզի Ս. Սարգսի ձիու ոտները թնջուկ չփաթածուի: Թոնրի վրայ էլ խաչերկաթը չեն դնում, որպէսզի գառները չգժուեն:

Ուրբաթ երեկոյեան տան տիկիներն աների գլխաւոր դռների լետեւ մի մի սկուտեղ են դնում և վերան շարմաղով փոխինդ շարմաղում, չորս կողմն էլ չորս մոմ վառում, յուսալով որ Ս. Սարգիսը իւր ձիով կը գայ այցելելու և՛ իրենց տունը և նրա ձիու ոտների հետքերը կը մնան փոխինդի վրայ:

Երբ լուսանում է, պառաւներն խկոյն վեր են կենում և նայում, թէ դռան լետեւ դրուած փոխինդի վերայ պայտի հետքեր չկան: Անսահման է լինում նրանց ուրախութիւնը, երբ այդպիսի մի հետք նկատում են: Գանձա, մի անգամ չարաճճի տղաները մի պայտ էին խցկել Սէլրանենց փոխինդի վրայ և մի քիչ էլ ձիու թրիք դրել: Սէլրանենք մեծ հպարտութեամբ այդ փոխինդից խաշիլ էին պատրաստել, ձիու թրիքն էլ մանրել հետը խառնել և գիւղի իշխաններին, ամենաթանգագին հիւրերին հրաւիրել ուտեցրել էին:

Այդ օրը միմիայն խաշիլ են պատրաստում և այն էլ առաւելապէս դռան լետեւ դրած փոխինդից:

Նոյն երեկոյին աղջիկներն ու երիտասարդները աղի կլիկներ—սաստիկ աղի հացեր— են ուտում և միքանի աղօթքներ շշնջալով պարկում:

Գիշերը Ս. Սարգիսը «դրռ» ձին հեծած, «ալ դափուտը» վերան, «մզրախը» (նիզակ) ձեռին չափ է ընկնում Ախալքալաքի դաշտավայրով, մի վայրկենում անցնելով մի ծալրից միւրը: Նրա ձիու պնչերից ամպեր են ցայտում և փաթիլ փաթիլ ձիւն անում, ոտների տրոփիւնից աշխարհք թըն-

դուժ, նիզակի խաղացնելուց սաստիկ բուժք բարձրանում: Նա այցելում է միքանի արժանաւորներին տները և տնօրինում, թէ որ երիտասարդը որ աղջկան փոխադարձաբար ջուր տալ:

Երիտասարդների ու աղջիկների այդ օրուայ ամբողջ խօսակցութիւնը լինում է գիշերը տեսած երազները: Ամէն միւնը պատմում է, թէ ո՞վ և կամ ինչպիսի ոք եկաւ և իրեն ջուր տուեց, ջրի ամանը ինչէ՞ց էր և թէ որքան ջուր կար մէջը: Գրեթէ բոլորն էլ հաւատում են, որ այդ ջուր տուողն է իրենց վիճակուած և որ անշուշտ, ինչպէս և լինի, սրա հետ են ամուսնանալու: Եթէ ջրի ամանը ոսկուց է լինում, ասում են թէ ամուսինը սաստիկ հարուստ է լինելու, եթէ արծաթից, միջակ հարուստ, իսկ եթէ պղնձից և կամ կաւից՝ աղքատ: Ջրի քանակութիւնն էլ որոշում է, թէ որքան ժամանակ են միմեանց հետ ապրելու. եթէ լիքն է՝ շատ երկար, եթէ կիսատ, կեսնքի կէսը, իսկ եթէ քիչ, միայն միքանի տարի:

Այդ օրը առաւօտեան սովորաբար պատարագ է մատուցւում և գրեթէ բոլորը գնում են եկեղեցի: Երիտասարդներէց և աղջիկներից շատերը հաղորդւում են և ջերմեռանդութեամբ աղօթում Ս. Սարգսի պատկերի առաջ:

Պատարագը սովորաբար մատուցւում է մի որևէ գերդաստան հին և նոր ննջեցեալների հոգու փրկութեան համար և այդ գերդաստանը հրաւիրում է գրեթէ բոլոր չափահաս և ծեր մարդկանց հոգու հաց ուտելու, ուր և՛ Ս. Սարգսի մասին աւանդութիւններ են պատմւում:

Այսպէս՝ մինը կամենալով ցոյց տալ, թէ ինչպէս Ս. Սարգիսը օգնութեան է հասնում իւր ծովը պահողին, պատմում էր.

Մի մարդ Ս. Սարգսի ծովը անսրւաղ բռնում է: Պատահում է, որ նրա եղբայրը սաստիկ հիւանդանում է և ինքը ստիպուած է լինում կէսգիշերին գնալ մօտակայ գիւղից քահանայ կանչել, որ նրան հաղորդութիւն տալ: Ծանապարհին սրան շրջապատում են գայլերը, իսկ ինքը ո՛չ մի գէնք չէ ունենում պաշտպանուելու: Բայց սա հաւատով դիմում է

Ս. Սարգսին և նրան օգնութեան կանչում: Մէկ էլ տեսնում է, որ մի «ղբու» ձիաւոր եկաւ և իւր նիզակով բոլոր գալլերին հալածեց: Սրանք փախան և հեռուն պըպըզեցան: Քահանային առած վերագառնալիս այս մարդը դարձեալ նկատում է նոյն գալլերը միևնոյն տեղում պըպըզած, միայն այս անգամ ոչ մի շարժում չեն անում: Վախենալով կամաց կամաց մօտենում են նրանց և տեսնում, որ բոլորն էլ քար են դարձած: Մինչև այժմ էլ, ասում են, թէ կան այդ քարերը:

Մի ուրիշն էլ հաւատացնում էր, թէ Նաքալաքե գիւղից մի քուրդ բքից բռնուելով՝ Ս. Սարգսին օգնութեան է կանչում և խոստանում մի զոյգ մօմ վառել: Ազատուելով նա ուրանցում է իւր խոստումը, սակայն յաջորդ տարին, Ս. Սարգսի շարթին նոյնպիսի մի բքից խեղդւում է:

Բայց Ս. Սարգիսը ամէն տարի մի յոյն է խեղդում, կամենալով ընկճել այդ ազգի կամակորութիւնը: Պատմում են, թէ մի անգամ մի թաղաւոր ստիպել է մի յոյնի Ս. Սարգսի պասը պահելու և երբ սա չէ՛ յանձն առել, հրամայել է բանտ ձգել և միմիայն ցամաք հաց տալ:

Շաբաթ օրը հանել է նրան բանտից և տսել. «Տեսա՛ր, չէիր պահում, ինչպէս պահել տուի»:

— Բայց տրեխներիս նայի՛ր, պատասխանում է յոյնը, որ պասը լուծելու նպատակով տրեխներն էր կրծել:

Մինչ այս, մինչ այն, օրը փոքր ինչ բացւում է և արևը դուրս գալիս: Այս ժամանակ երիտասարդներն ու աղջիկները կտուրներում կանգնած իրենց բուլուճները—փոքրիկ հաց—որ գիշերը իրենց բարձերի տակ էին դրել, գնում են գէգերի վրայ և դիտում թէ թռչունները կը վերցնեն և ո՛ր կողմը կտանեն, ո՛ւմ կտրան վերայ կ'իջնեն, որովհետև հաւատում են, թէ այն կողմից, այն կտրան տակից գալու է սպասելի հարսնացուն կամ փեսացուն: Բայց վա՛յ նրան, որի բուլուճը գերեզմանի քարի վերայ դրուեցաւ. նա լուսահատւում է, հաւատացած լինելով՝ որ գերեզմանի հետ պիտի պսակուի:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

«Բարեկենդան, փորեկենդան.
Բարեկենդան օրեր է,
Դսելքս գլխէս կորեր է»:

Քաղաքում սովորութիւն է բարեկենդան անուանել մի-միայն մեծ պատից առաջ եղած մի ուտիս շաբաթը, բայց գիւղերում այդպէս չէ: Նրանց բարեկենդանը ուղիղ երկու շաբաթ է տևում, որ սկսւում է Առաջաւորաց պատից ան-միջապէս յետոյ:

Առաջին շաբթուայ երկուշաբթի օրուտնից քէլվանիքը (տանտիկին—խոհարար) սկսում են իրենց պատրաստու-թիւնը տեսնել. բաց են անում իրենց պահած իւղի կճուճ-ների բերանները և բաւականաչափ դաթայ թխում, հալուալ կփում:

Նոյն օրերը, տան մեծի կարգադրութիւնով, եթէ հա-րուստ են մի կով, եթէ միջակ միքանի ոչխար, իսկ եթէ աղքատ գոնէ մի գառը և միքանի հաւ են մորթում, միւր քաշ տալիս սառը մառաններում և մաս մաս գործ ածում, ուտում խմում:

Բնականաբար ուտել խմելուն միշտ միանում են խաղեր, երգ և հրաւէր:

Եւ ահա սկսում են գիւղի միքանի տներում հաւաք-ւել միքանի ընտանիքներ: Մէջ են բերում խոնջան, տղա-մարդիկը բաժանւում են երկու կարգի և նստում են խոն-ջայի երկու կողմը: Սինու կամ մատուցարանի վրայ գալիս է Ծ կամ 7 զանգակի ձևով փոքրիկ պոզեր, որոնք կոչւում են զառֆ, սկսւում է «մատնի» խաղը: Խաղացողներից մի կողմը տալիս է իւր անգամներից մէկին մատանին պահելու (որի անունից խաղը կոչւում է «մատնի խաղալ») զառֆերից մէկի մէջ: Մատանին պահելուց յետոյ շարուած զառֆերը մատուցարա-նի վրայ բերում, գնում են խոնջայի վրայ. հակառակ կողմը

աշխատում է իշկելով (բնագրումով) երկու զառճ գլուխ ասել և նրանց միջից գտնել մատանին: Եթէ գտնում է՝ խաղը 1 հաշվւում է նրա, իսկ եթէ ոչ 1 հաշվւում պահող կողմի հաշուին: Այդպէս շարունակւում է մինչև 10 կարգ լրանալը. 10-ին տարւոնող կողմի անգամներից մէկի ճակատին կամ ձեռքին զառճի մրոտ քիւփով դադմա (նշան) են խփում. իսկ 20 լրանալիս՝ 2 դադմա են խփում և տանող կողմը հրամայում է տարած գառը, կամ հաւերը 1—2 շիշ օղու հետ բերել ընթրիքի պատրաստութեան համար: Հրամանն իսկոյն կատարւում է: Բայց մինչև ընթրիքի պատրաստուիլը տանող կողմը սկսում է զանազան խաղերով տանջել տարւոնող կողմի անգամներին: Կան զանազան խաղեր, օր. սաթռանջ, դաւա-օյին, քարվան և այլն. եթէ օր. քարվան է, տարւոնող բոլոր անգամների վզերն իրար հետ կապում են մի պարանով և տանողները վրաները նստում՝ գոմի, բազի, տան մէջ միքանի անգամ ման ածում: Նստողները խփում են ուղտ շինած տանողներին. վերջիններս չեն լսում, վայր են ձգում, բարձրանում է աղմուկ, աղաղակ, ծիծաղ: Վերջապէս տանտիկինը աւետում է կերակրի պատրաստ լինելը՝ խաղը վերջանում է: Բացւում է սեղան, տանտէրը բերում է մառանից իւր ունեցածը, ինչ որ Աստուած տուել է: Խոնջաների շուրջը բոլորւում են ամենքը, թէ մեծ, թէ փոքր. սուտ ասացուածքներով, ծանր զաւէշտներով ուտում, խմում, զուարճանում մինչև կէս գիշեր և ապա ցըրւում իրենց տները:

Մատանի խաղը շարունակւում է մինչև բարեկենդանի վերջանալը. նա քանի մօտենում է մեծ պասին՝ այնքան կենդանանում, ոգևորող է դառնում, մինչև անգամ չափից անցնում: Առաջ, որ մեծի մի ակնարկը բաւական էր անչափահասին տեղնուտեղում սառչելու, քարի պէս մնալու՝ այժմս նախատինքն ու սպառնալիքն էլ չի ազդում: Պատիկը կէս հանաքով համարձակ ասում է ծերին՝ ինչ որ ունի իւր սըրտում և շատ անգամ ծաղրում երգելով.

«Արի պառաւ քեզի գովեմ. ջաղցէն ելած դե կլմանիս.
Աչքդ փոս է, քիթդ դուս է. թեպէնքն փոխուած հաւ
կլմանիս.

Յաճախ պառկեցնում և ոտքերին միքանի անգամ ճիւղոտով խոր-
փում են. ո՞վ ինչ կարող է ասել. «վարդապետաթող է, բարե-
կենդան օրեր է, խեղքս գլխէս կորեր է»: Մեծը ծիծաղելով,
կամայ թէ ահամայ ընկերանում է ընդհանուր ուրախութեան
և տանում այդ բոլորը:

Բայց այդ մի տեսակ զուարճութիւնը չէ հայի տանը.
կան և շատ ուրիշ զուարճութիւններ:

Շատ անգամ առաջուց յայտարարում է, որ աշըղն այս
ինչ գիշեր մէկի տանը հէքիաթ է ասելու: Ել մարդ չի մը-
նում գէւղում՝ բոլորը հաւաքւում են այնտեղ: Օգան ու գո-
մը լցւում են. շարժուելու, ասեղ քցելու տեղ չկայ: Սիրելի
հէքիաթներն են «Շահ-Իսմայիլը», «Ազարան Բիւլբիւլը», «Քեա-
րամն ու Ասլին», «Քօրօղլին» և այլն: Հէքիաթն սկսւում է ծրագ
դնելու հետ: Աշըղը սաղը գցած թւեր, պաշմակները (մաշիկ) հա-
գած, նոր շորերով ման է գալիս օդալի մէջտեղը—տափում,
բարձր ձայնով թուրքերէն ասում է հէքիաթը, շրխացնում է
մաշիկով գետնին, ոգւորում, ոգւորում հանդիսականներին և
բարձր ու զիւ ձայնով կանչում սիրահար գոյգերի երգը: Նա մերթ
ընդ մերթ մօտենալով մէկ կամ միւս ծխողին, ագահութեամբ
թանձր ծուխը կուլ տալիս մի քանի անգամ, նրա քուլաները
քթածակերից ամպի նման դուրս թողնելով՝ շարունակում հէ-
քիաթը: Կամ յաճախ կամենալով հանգստանալ՝ առնում է
ձեռը արաղի բաժակը, իրանով հրճուող, ոգւորուող հանգի-
սականներին միքանի խօսք ասում և արաղը խմում—բու-
կը թրջում ու նորից շարունակում: Ոգւորութիւնը սաստ-
կանում է, հանդիսականները մտքով թռիչք են անում դէ-
պի այդ կախարդական—գիւցազնական աշխարհը, և այդ
ոգւորութեան տակ մոռանում ամէն տեսակ աշխարհային
բան: «Հէյ աղալար» կանչելով, և կրակով լցուած աչքերով
ոգւորութեամբ նայում է աշըղը ամէնքի երեսին և ամուր
խփում սաղի թելերին: Հառաչներն ու զփաները՝ անընդհատ

լսուում են հանդիսականների բերանից. և ահա աչքդին օգնութեան հասնելով լաւ ձայն ունեցող երիտասարդներից մի քանիսը՝ խաղի մէջ հարցնող կամ պատասխանող տները ներանք են երգում:

Գոմի թանձր, գոլորշիախիտ և ծխով լցուած օդի մէջ բոլորը տփիօմ ընդունածի նման թմրած՝ անձնատուր են լինում երկար ժամանակ լռող և այժմ գրգռուած զգացմունքներին. նրանց հետ խօսում, հառաչում, տխրում, ուրախանում և սրտերն ու աչքերը քամելով՝ կէս գիշերն անց ցրում իրենց տները:

Բայց նրանց զուարճութիւնները միայն գիշերները չեն տեղի ունենում. ցերեկներն էլ ունին իրենց հրապուրիչ խաղերը, օրոնցից մէկն է և ջիլիթը (մական): Կտրիչ երիտասարդները ձի հեծած ցոյց են տալիս հանդիսատեսների ահագին խմբին իրենց շնորհքներն ու ճարպիկութիւնը:

Երբեմն էլ նոյն կտրիճները դաուլ-զուռնան առաջ խառնած և կամ առանց դաուլ-զուռնայի հաւաքում են մի օրւէ յարմար տեղ, մեծ մասամբ «պասմաթ-ի» (քաքորի շերտ) վերայ և գօտեմարտում:

Փոքրիկ խմբեր էլ առանձնացած թուղթ, նարդի, դամա և այլ խաղեր են խաղում:

Երեկոները, ուրախութեան թունդ ժամանակին լանկարծ դրոխց լսուում են կենդանական զանազան անճոռնի ձայներ: Գոմի գուռը բացւում է և լանկարծ ներս է ընկնում ալլադալի մէկը, երեսը ալիւրի կամ մրի մէջ կորցրած, այժմի մորթուց մեծ մօրուք շինած, խալտառակ ձևով մորթիներից շորեր հագած, ձեռին երկար ձող կամ ակիշ բռնած, զանազան թռիչքներ անելով յարձակում է գործում ուրախութիւն անողների վրայ. բոլորը թէ ծիծաղում են թէ վախենում այդ ալլադալի մէյմունից: Երեխաները սաստիկ երկիւղից սրտածաք լինելով՝ լալիս են, ամուր կպչում մայրերի կրծքին և դուլաները թագկացնում նրանց թեւերի տակ: Մանալք վախեցած, կէս-ծիծաղ պահում են երեխաներին և հայհոյանքով ետ մղում յարձակում գործող մէյմունին: Բո-

լորը տեղերից վեր են թռչում, իրար են խառնւում. լացը, ծիծաղը, աղաղակը, հալհոլանքը իրար է խառնւում... Եւ վերջապէս մէյմունը տան տիրոջից իւր նուէրը առնելով՝ իւր բազմաթիւ ընկերներով գնում է ուրիշ տեղ: Սակայն նրա գնալուց յետոյ էլ չէ իմացւում, թէ ով էր այդ չարածճին: Մէյմունները ներկայացնում են կամ պառաւ սատանայ, կամ անճոռնի հրէշ, կամ տգեղ ուղտ, կամ սարսափեցնող շուտտ, կամ դւ և կամ մի ուրիշ բան:

Այդ մէյմունները այդպէս աւելի անբովանդակ են, բայց կայ մի առանձին տեսակը, որ կոչւում է ղաղի և ունի իւր լուրջ բովանդակութիւնը: Մէկը հագնւում է հաստ մուշտակ, երեսին կապում ահագին մօրուք, գլխին դնում թէնջէրէ, շալէ երկար գօտին իբրեւ ժապաւէն դցում ուսը և տէրոզորմեայի հատերը քաշելով մեծափառ նստում է բարձր սատրի վրայ, պահանջում ընտանիքի անդամներին առաջը չոքել, ձեռքերը կրծքերին դնել և ստիպում է իւր ամբողջ կեանքում անմեղ և հանգիստ հայից, որ ասէ չեղած տեղից իւր մեղքերը: Այդ դատին, որ ներկայացնում է կամ թաթար բռնակալը, կամ արաբական խալիֆան, կամ կրօնամոլ տաճիկը, կամ կատաղի ենիչարին և կամ մի ուրիշ բռնակալ-արիւնարբու աւերող իշխան՝ իւր քննութիւնը վերջացնելուց յետոյ կամ հրամայում է, որ իւր հրամանատարները այդ անօրէն հային տանեն կախեն, ողջ ունեցածը թալանեն, կամ բաշխելով նրանց անպէտք կեանքը՝ մեծ փրկանքներ առնում, հեռանում է:

Վալ այն մարգուտն, որ յանձն կառնի դատի դառնալ. էլ ինչ հալհոլանք, էլ ինչ հարուածներ ասես, որ չորս բոլորից չեն տեղում:

Իսկ նորահարս սիրահարուած ջահիլ աղջիկներն ու տղերքը, կամ մանկամարդ հարսներն ու երիտասարդները երկար ժամանակ սպասելով բարեկեանդանի ազատ, արձակ վարդապետաթող օրերին՝ հաւաքուած մի տան մէջ սկսում են պարը: Պարն առաջ սկսւում է խաղի եղանակով, որ երիտասարդներից մէկը կամ երկուսն ասում են, իսկ միւս մէկը

կամ երկուսը առնում: Խաղացողների թիւը շատանում է, գալիս է տիկ կամ տիգար իւր զրուգրուացող ձայնով: Իսկոյն իմացւում է պարի մասին. էլ ջահել մարդ չի մնում գիւղում, թափւում են այգտեղ, բերել են տալիս գաւուղ-դուռնայ, ամբողջ տունը լցւում է, կանգնելու ու նայելու տեղ չկալ. ուրախութեան աղաղակների մէջ զուռնայի ձայնը հազիւ է լսւում: Աբեղաթող օրերին ազատ իրաւունք է սիրահարուած ջահել զուգերին իրար ձեռ բռնել պար խաղալ: Նրազները դնում են, ամեն մի տան մեծ փնտռում է իւր ջահելներին, բայց ո՞վ է նրանց խօսքը բանի տեղ դնողը, հիմա էլ խո հասարակ օր չէ, բարեկենդան է. առանց ուշադրութիւն դարձնելու խաղում են: Առաջ, որ մի հասակն առած մարդ ճիպոտը կառնէր՝ ինչպէս որ ալժը ոչ-խարից, այնպէս էլ տղամարդկանց կանանցից կը ջոկէր՝ ալժմս անկարող է. չլսելուց զատ հըռը լէնին վըէն կը խնդան, պարիցը դուրս կանեն:

Պարի մէջ կարգը պահպանելու համար որոշւում է մէկը, որ երկար ճիպոտը ձեռին ման գալով քոթ տալիս է կանգնողի կամ ման եկողի գլխին: Անկարգը ցաւած գլուխը քորելով տփկում է տեղը:

Համարեա կէս գիշերն արդէն մօտենում է. պարը փայտոտ անելու համար հազիւ փախցնում են զուռնաչուն, և սրտերը բաբախող սիրահարուած ջահելները ցրւում են իրենց տները:

Եթէ բարեկենդանի առաջին շաբաթին օրական միքանի անգամ էր սեղան տրւում, երկրորդ շաբաթին, մանաւանդ վերջին օրերը, սուփրէն բոլորովին տեղից վեր չի քաղւում: Բաց են անում սերի, կարագի և այլ պատուական ուտելի-դէնների պուտուկների բերանը: Քէլվանին «հոգեպահուստ» ինչ որ ունի բերում է մէյդան. «էլ էստից ետեւ պահեմ ինչ պիտի էնեմ, մկներուն փայ պիտի դարձնեմ»:

Այդ օրերը շատերն սկսում են բարեկամներին ցերեկով այցելել և վայելել նրանց ճոխ սեղանը: Անկարելի է, որ փողոցով անց կենաս և միքանի հարբած ձիւնի մէջ գնդու-

տուտող մարդ չտեսնես. ամեն ոք չիմած էլ մի տեսակ թըմ-
րած դրուժեան մէջ է զգում իրեն և շատ արդարացի է այն
խօսքը, թէ «բարեկենդան օրեր է, խելքս գլխէս կօրեր է»:

Հարս գնացած աղջիկներն այդ օրերը տուռն են բերած
լինում հէրանցը, և սկեսրանց տան մէջ կրած նեղութիւնից,
կորցրած ազատութիւնից միքանի օր հազիւ շունչ են քա-
շում իրենց սիրելիներէ և ծնողներէ մօտ, միխթարում և
ուրախանում: Ըստ մեծի մասին փեսաներն իրենց նշանած-
ների (ամուսինների) հետ բարեկենդանի ցերեկները իրենց
տներանց տանն են անցկացնում:

Առաջները հօկտեմբեր ամսից առաւօտ-երեկոյ մութ, խո-
նաւ և տաղտկացուցիչ գոմի կամ գոմի-օդի մէջ սովորող
վարժատան տղէքը հազիւ սկսում էին երկու շաբաթ ազատ
շունչ քաշել: Մինչդեռ վարժատուն գնալու ժամանակ, գըր-
պաններում վէզի կտոր անգամ պահելու իրաւունք չունէին՝
այս օրերում պզի (սառուցի) վրայ վէզն ու կակալը շարած,
անաքէստանքը (սախկայ) ձեռներն առած՝ ազատ կերպով
չըրխկացնում էին. խաղում էին խաղում և մի լարմար ժա-
մանակ ընտրելով՝ իրենց խալֆաների առաջնորդութեամբ մի
մի նուէր, մի ճիւղտ և մի շիշ արող ձեռքներն առած գը-
նում էին վարժապետին տեսութեան: Նուէրները տալուց
լետոյ նրանցից ամենահամարձակը առնում էր ձեռքը ճի-
ւոտը և ասում. «Է՛, դու մեզի շատ ես ծեծէ, հիմի սրէն
քուկդ է, պառկի՛ս. վարժապետը կէս ծիծաղով, կէս նեղա-
ցած չէ լսում. այստեղ միւսները վրայ էին թափւում, զօ-
րով պարկեցնում և ոտքերին ճիւղտի միքանի հարուած հասց-
նելով ասում. «Է՛լ չես ծեծէ մեզի, ասա՛: «Ձէ, չէ՛ս, խոս-
տանում է վարժապետը: «Ռէ, մեր փեշկեաշը՛: Ուսուցիչը
նուէր տալով միքանի կոպէկ, աղատւում է:

Իսկ միւս փոքրահասակ, քերեկան, պղտի սաղմոս կար-
դացող աշակերտները, որ ոչ թէ վարժապետի, այլ և մին-
չև անգամ խալֆաների հետ չէին համարձակուիլ այդպէս
վարուելու, մի զոյգ գուլպայ, մի զոյգ պաճիճ (թոզլուկ), մի

թաշկինակ, գաթալ, սեր առած գալիս էին իրենց վարժապետին տեսութեան:

Վարժապետը նրանց բոլորին, թէ մեծին և թէ փոքրին հրամայում էր հերթով կանգնել և երգել էր տալիս հանդիսականներին զուարճացնելու համար, ապա արձակում խաղալու:

Վերջին օրերը, որ իրենց ասելով միմիայն փոքրի օրեր են, կամ բարեկենդան՝ փոքրի կենդան է, ոչ թէ ժամ ու պատարագ չեն լինում՝ ալլ և պաս պահելն անգամ մտքերով չէ անցնում: Պառաւններն ու ծերերը, որ մեծ երկիւղածութեամբ օրէնք երկու անգամ եկեղեցի էին գնում, աղօթք անում՝ այսօր պասն ուտիսից չեն էլ ջնկում: Ժամում ո՞վ կայ. մի տէրտէր ու մի ժամկոչ, շատ-շատ մի հատ էլ տիրացու: Տէրտէրն ինքն ասում է, ինքն էլ լսում, և դուրս գալով եկեղեցուց՝ պատահողի վրայ նեղանում, յանդիմանում, բայց միևնույն ժամանակ ինքն էլ քթի տակին ծիծաղում: —Է,՛ բան չունիս, տէրտէր. բարեկենդանք է, ժամս օրն է. էսօր—էգուան մեծ պաս է, ժամի օրերը կուգան, ասեղ ցրքելու տեղ չի մնայ. էրթանք, էրթանք նես, մէ լրախիմ անուշ էրա, ես գիտեմ ցրտէն ու մինակութենէն մռսած կլինիս,—ձեռ առնելով՝ քահանային տուն է հրաւիրում պատահող գիւղացին:

Նշանած աղջիկների «ջուխտ աչքը լուսա». սկեսրանց տանից էլ լինչ փեշկեաշներ ասես, որ չտեղան նրանց գլխներին. էլ փող, էլ ոսկի, էլ չիկիլայ, էլ թող, էլ վալայ, էլ ինչ թանգագին կտորներ: Նշանուած տղան էլ աներանց կողմից է ստանում. զոքանջը բաց է անում իւր սնդուկը, իոկ աները՝ քիսէն: Նոր խնամիները—նոր փափա—շարունակ իրար տանն են լինում, ուտում, խմում, հարսնցուն առաջ բերում, գլխների վերև կանգնեցնում, ուրախանում:

Շատերն էլ խնամախօսութիւնն ու նշանադրութիւնը բարեկենդանին են անում. յաճախ լինում են և հարստնիքներ:

Վերջապէս հասնում է բուն բարեկենդանը: Կիւրակի

գիշերը մօտիկ բարեկամները իրար մօտ հաւաքուած, ինչ որ ունին, ինչ որ մնացել է բերում են մէլդան. սուֆրէն տահաբին դէզ է ներկայացնում, աման դնելու տեղ չկայ, այնքան որ ուտելիքներն իրար վրայ են շարած: Իրար հետ սեղան են նստած ծերունի սկեսրայլը ու մանկամարդ հարսը, տղամարդ, կնիկ մարդ. բոլորը միասին վայելում են գաթայ, հալուայ, լոխում, հակիթ, հասութայ, սեր, կարագ, մատակի մածուն, նոր ծնած կովի դալ, հաւ, սագ, գառ, ուշաքի կամ կովի դաւուրմայ, քիւֆթայ, տոլմայ, փլաւ, եալին... էլ որ մէկն լիշես, որ մէկն ասես: Սեղան նստողների կողքերն ուռչում են. վերջապէս կէս գիշերն անց հաւաքում են ամէն բան, իրար «ճարահատեալ» սրտով շնորհաւոր պատասխելով ցրւում տները *):

Ե. Մալխասեան.

ՏԵՍՈՆԸՆԴԵՍԸ

Տեառնընդառաջին ասում են տէրնդադ: Այս երեկոյին, ժամասացութիւնից առաջ գրեթէ բոլոր տներում խեծախ են պատրաստում: Բորֆում են կորեկ, սխեռ ու ոսպ և հետը քիշմիշ խառնում: Խեծախ պատրաստում են գլխաւորապէս այն նպատակով, որ ատամնացաւ չստանան: Նշանած աղջրկայ ծնողները ածում են խեծախը մի սկուտեղի վրայ, մէջ տեղը մեղր լցնում և շուրջը շաքարեղէն շարում, ապա վերան փեսայի համար մի ելակ, կամ մի գգակ, կամ մի գօտի և կամ մի թաշկինակ դնում և տան փոքրիկի ձեռքով ուղարկում փեսացուին: Խնամոնք պատում են փոքրիկին միւրգ

*) Որովհետեւ բարեկենդանին ես գիւղերում չեմ եղել, ուստի խնդրել եմ պ. Մալխասեանին, որ տեղացի է, նկարագրելու աղջորի համար և՛ շնորհակալութիւնս եմ լստնում:

և թէլ տալով, իսկ ուղարկուած խեծախը փեսացուն բաժանում է տնեցիներին և իւր ընկերներին:

Հէնց որ երեկոյեան ժամերգութեան զանգակները հնչում են, գրեթէ բոլորը, աղամարդիկ և կանայք, աղջիկներըն ու հարսերը գնում են եկեղեցի: Սրանցից միքանիսը բոլթ մատի մատնարմատի մօտ, երկու ջղերի միջև գոյացած փոսում ջուր են տծում և աշխատում առանց թափելու տնից մինչև եկեղեցի տանել: Եւ եթէ լաջողացնում են, կարծում են, թէ իրենց ամբողջ կեանքում բաղդաւոր են լինելու: Եկեղեցում նորապսակ երիտասարդները խաչհամբուր են տալիս և վառում ջահ: Գրեթէ ամէն ընտանիք մօմ է գնում և երբ ժամասացութիւնը վերջանում է, միմեանց հրհրելով, խօսելով և կռուելով աշխատում են վառել մօմը ջահից և առանց հանգցնելու տանել տուն: Այստեղ, բակերում և հերթիկներում արդէն դիզուած են լինում խոտի կոյտեր, որ վառում են եկեղեցուց բերած մօմերով: Սակայն ամբողջ մօմը չեն վառում, նրանից միքանի կաթիլ կաթեցնում են գլխարկի մէջ, որպէսզի կաթակը իրենց չխփի, պահում են և կարկուտ եկած միջոցին վառում, որ կարկուտը կտրի, ինչպէս և երաշտ ժամանակ, որ անձրև գայ:

Այս ժամանակ ամէն կողմից տէրնդազի ծուխը քուլայ քուլայ վեր է բարձրանում: Ծերերն ու պառաւանները ուշի ուշով նստում են թէ ծուխը ո՞ր կողմն է գնում, որովհետեւ այն կողմից է գալու սպասելի փեսացուն կամ հարսնացուն: Իսկ աւելի խորագէտները պնդում են.—եթէ ծուխը հարաւ կամ արեւելք երթայ՝ հասկը լու է լինելու, իսկ եթէ հիւսիս կամ արեւմուտք՝ վատ: Երեխաներից սկսած մինչև ծերերը թռչկոտում են տէրնդազի վրայով, իսկ աղջիկներն ու կանայք պտտում շուրջը՝ բոլորեքեան «Ոչ քորոտիմ, ոչ բորետիմ» ասելով: Իսկ միքանի սրիկայ երիտասարդներ էլ բղաւում են.

«Տէրնդազ, քուրդ ինձի տաս,

Ես պագնեմ, գուն գուրանաս»:

Մանր աղաներն ու աղջիկներն էլ յատուկ այս նպատակի

Համար գործուած գուլպաներ կամ արախչիներն են ձգում կրակը, որպէսզի շնորհք ստանան: Բայց սրանք բոլորը դադարում են՝ երբ նորապսակ ամուսինները գալիս են տէրընդազի շուրջը պտտելու: Հարս ու փեսայ միմեանց բռնած, ձեռներին զոյգ մոմեր, հարսի կողքին սանամալը, փեսինը՝ կնքահալը կանգնած, ձեռներին մի մի մոմ, երեք անգամ պտտում են:

Տէրնդազի շուրջը պտտեցնում են նորածին երեխային, որ քառասունքը լցուի: Իսկ ամուլ կանայք իրենց ուղիւորի ծայրն են վառում, որ երեխայ ունենան:

Երբ տէրնդազը հանգչում է, կանայք մոխրից տանում կճուճների վրայ են ածում, որ բարաքեաթը աւելանայ, տան հերթիկից ներս են շաղ տալիս՝ ասելով.

Կատուն նեսը՝

Մուկը գուսը,

որպէսզի մկները ջարդուին: Բանիմաց տանտիկիներն էլ նոյն մոխրից ածում են հաւանոցի հերթիկից ներս, որ հաւերը շատ հաւկիթ ածեն:

Գիշերը ճնճղուկները գալիս տէրնդազի մոխրի մէջ թաւալում են:

Մ Ե Ժ Պ Ա Ս

Բարեկենդանի կերուխումից գրեթէ յօգնած, երեկոյեան մի անգամ ևս կուշտ ուտում և հաւկիթով փակում են բերանները, ապա լուսնում ձեռքերը, ողողում բերանը և պարկում երազներ տեսնելու: Որկրամուկները գիշերը միքանի անգամ վեր են կենում, ընթրիկի մնացորդներից ուտում և նորից պարկում քնում:

Առաւօտը շատ վաղ վեր է կենում տատը, մի երկար ճիպոտ վերցնում, ուրորում, մի ուրիշ կարճ ճիպոտ մէջը կապում, ծայրին մի սոխի գլուխ ամրացնում, վրան ախիլապալ—

իծու մազից պէս և միրուք ունեցող տիկին — կապում, եօթ գոյնզգոյն թեպուր կոխում սոխի մէջ և կախում տան հերթիկի խաչերկաթից: Երբ երեխաները զարթնում են, տատը ցոյց է տալիս նրանց ալդ և դողդողալով ասում. «Տեսէք, տղաք, ախալոչը էկեր է, չըլի թը պասերտ ուտէք, թըչը քար կը ցկէ գլխներուտ»: Սակայն նոյն ալդ տատը նստելով «տան» շէմքին, մէջքը դրսի դռան արած, ուտում է բարեկենդանից մնացածները:

Այդ օրը «վլացարուք սրբեցարուք»-ի օր է ասում. պէտք է բոլոր ամանները լուալ, մաքրել, տուն տեղ դուրս ձգել, թափ տալ, քունջ ու պուճախ աւել իստակել: Եւ ահա կը տեսնէք մի հարսը ամաններն է լուանում, իւղի, պանրի պուտուկները բերնքսվալը կործում: Պէտք է ասել, որ մեծ պասին ուտիսուալ ոչ մի բան մնացած չի լինում. դեղի համար մի ֆունտ իւղ անգամ ամբողջ գլուղում չի գըտընուիլ, որովհետեւ ուտելունը ուտում են, մնացածը ծախում: Միւս հարսը տներն է հոգում, փոքր թոնիրը վառում, տատը պոչով ապուր եփում և տղամարդկանց կերակրելուց լետու հարեաններին հրաւիրում և պոչով ապուր ուտեցնում:

Այդ օրը «բաղդ փորձուկ»-ի օր էլ է, ուստի գնում են միմեանց տուն երկու նպատակով, նախ՝ շնորհաւորելու մեծ պասը և երկրորդ՝ փորձելու իրենց բաղդը, նախելով թէ ինչպէս կը հիւրասիրեն իրենց և կամ լինէ կը խօսեն: Սովորաբար հետեւեալ խօսքերով են շնորհաւորում. «Շնորհաւոր պաս ըլի, բարով խերով, դուով դրկցով ու բարեկամներով հասնենք սուրբ Յարութեան»: Բայց երբ փոքր ինչ գլխները տաքանում է, անուհետեւ շնորհաւորութիւնը հետեւեալ բանաձևն է ստանում.

«Շնորհաւոր պաս»:

— Եփօր մերը գաս:

«Թաամ»՝ բախի տասն:

— Թը խելօք մնաս:

Այս հաւաքում են մինի տանը և «տիկի» ներգաշնակութեամբ պարում ու մախոխը գովում:

Քաղաքում նշանած աղջկայ կերսանքը կաղին և շագանակ առած գնում են աղջկայ տունը «կաղին խաղալու»: Երկար «ջուխտ է թէ վարդ» (կենտ) և այլ խաղեր խաղալուց յետոյ, ընթրում են և վերադառնում:

Այնուհետև գրեթէ ամէն օր միատեսակ բոլոր գիւղացիները, մեծից մինչև փոքրը, տղամարդ և կին, մինչև ժամը 11-ը, այսինքն մինչև ճաշուայ ժամերգութեան աւարտը ծոմ են պահում: Ձանգակները խփելուն պէս բոլորը եկեղեցի են թափում, անհամբերութեամբ սպասելով աւարտին, երբ սաստիկ արագութեամբ տուն վերադառնալով վայելում են պոչով ապուր, կամ մախոխ, աւելուկ, բողկ և այլն: Աւելի ջերմեռանդները միաժամ են բռնում, այսինքն օրը միայն մի անգամ են հաց ուտում և ջուր խմում:

Երեկոյին դարձեալ եկեղեցի են գնում, վերադառնում իրենց համեստ ընթրիկն անում և հաւաքում միմեանց մօտ, յայտնի հասարակաց օդաները խօսելու, հեքեթ ասելու: Ժամը դեռ 8 չեղած ցրում են տները և քնում: Առտուտ վաղ ժամը 5-ին վեր են կենում, կենդանիներին դարմընում, (յարդ տալիս) և նորից հաւաքում օդաները, ուր խօսակցելով մնում են մինչև ճաշու ժամերգութիւնը:

Կիրակի օրը տան բոլոր երեխաները մի մի ճիպոտ առած, ուրախ ուրախ բարձրանում են կտուրը և հերթիկից այնքան խփում ախալոյին, որ նրա թեպուրներից մին վայր է ընկնում: Երբ բոլոր թեպուրները վայր են թափում, գալիս է ցանկալի զատիկը: Այսպիսով ախալոյը ծառայում է գիւղացիներին և՛ որպէս մեծ պասի օրացոյց:

Առաջ սովորութիւն է եղել, որ մեծ պասից սկսած մինչև սերմը գետին ընկնելը ամէն կիրակի խեծախ անեն, իսկ այժմ այդ սովորութիւնը վերացել է: Միայն դեռ մինչև հիմայ էլ ցանքից մինչև հնձի ժամանակը ամէն կիրակի հատիկ են անում, որ ցորենը չցորանայ:

Գրեթէ առանց բացառութեան մեծ պասին, կիրակի օ-

ըերը պատարագը առաւօտեան ժամերգութեան կից է լինում և անշուշտ մինը «առնում է», ալսինքն մինը խնդրում է, որ իւր հին ու նոր ննջեցեալների հոգու համար մատուցուի: «Առնողը» ուղարկում է քահանային գինի՝ բաժակի, և ալիւր՝ նշխարքի համար: Յետոյ էլ, որպէս ժամոց՝ տալիս է նրան 20—30 կ: Նոյն օրը գեւղացիներին էլ հոգու հաց է տալիս:

Մ Ի Ջ Ո Ւ Ն Ք

Միջունքի ուրբաթ երեկոն կոչւում է «Քառսուն մանկունք»: Այդ երեկոյ չափահաս աղջիկները հալուալ, գաթալ, խեծախ են անում և սկուտեղի վրալ դրած 10—20 կ. էլ փող, տանում նշանած ընկերուհու տուն: Այստեղ ըտրը միասին՝

Քառսուն մանուկը լճին,
Թազն ու պտկը ճախն,
Ինչ օր տուիր բաղնեցպանին,
Անոր կէսն ա ինծի տու:
Կամ

Քառսուն մանուկ, քառսուն կուս,
Քառսուն մանկանց մեղալ ես,
Ինչ օր տուիր բաղնեցպանին՝
Անոր կէսն ա ինծի տու:
Եւ կամ՝

Լիճը լճին՝

Քառսուն մանուկը ճախն

ասելով՝ ծունր են դնում և իւրաքանչիւր անգամին քառսուն հատ ունեցող համրիչից մինը ձգում: Երբ 40 անգամ ծունր են դնում, ալսինքն երբ համրիչը մի անգամ ամբողջովին քաշած են լինում, նախապէս պատրաստած 40 քարից մինը մի կողմն են դնում: Եւ ալսպէս, երբ կէս են լինում,

այսինքն $20 \times 40 = 800$ ծուներ դրած են լինում, սաստիկ խոնջած, նստում իրենց բերած հացը ուտում են և ապա կրկին շարունակում:

Երբ 20×40 ծուներն էլ դնում են, այսինքն $40 \times 40 = 1600$ ծուներ դրած են լինում, սաստիկ յոգնած, մատները կոճերը ուռած, նորից նստում տանտիրոջ հացը ուտում և ընկնում քնում են:

Առաւօտ այս աղջիկները միմեանց գլուխ են լուանում ի լիշատակ 40 մանկանց խեղդուելուն, հաց ուտում և իւրաքանչիւրը ստանալով տան տիրոջից մի զոյգ գուլպայ նուէր, գնում են եկեղեցի, որտեղից և ցրւում են: Այդ ամբողջ օրը կիրակի են բռնում:

ԺԱՂԿԱՋԱՐԴ

Ախալքալաքցիները Ծաղկազարդին «Ծառազարդար» են կոչում: Այդ օրը եկեղեցում օրհնում են ուռենու ճիւղեր, որ գլխաւորապէս բերում են նոր պսակուողները և բաժանում գրեթէ բոլոր ժամաւորներին:

Երեսաները խումբ խումբ, օրհնուած ուռի ճիւղերը ձեռներին շրջում են տները և ասում.

Ծառազարդար, ծառին զարդար,

Խունգ առէք, խունգ ծխեցէք,

Սև հաւէն հաւկիթ գուզեմ,

Կարմիր կովէն եղ գուզեմ.

Վէ՛վ օր տալ՝ շէն մնալ,

Վէ՛վ օր չտալ՝ չորչորնալ:

Միքանիսն էլ օրհնուած ուռի ճիւղով խփում են սրան նրան և ասում,

Քամու տեղ,

Սրտի դեղ,

որպէսզի հիւանդութիւնները փարատուին:

Քաղաքում երեխաները գնում են հիւսններից վարկաչաներն: Սա փայտեալ փոքրիկ, ատամնաւոր գլան է, երկար կոթով: Գլանի երկու ծայրին անց են կացրած մի մի գլանի բարձրութեան, 2—3 վերջով երկարութեան տախտակներ, միացած ուրիշ երկու տախտակով, գօտիներով: Մի ուրիշ բարակ տախտակ էլ, մի ծայրով լենւում է գլանի ատամներին վրայ, իսկ միւս ծայրով անցնելով երկրորդ գօտով՝ միանում առաջին գօտուն: Երեխաները պտտեցնելով վարկաչանները, աղմուկ են բարձրացնում և միեւնոյն ժամանակ երգում.

Վարկաչայ, կարին կաչա

Սև օձին սև սոմաթայ (ճիպոտ)

Խունդ առէք, մոմ առէք,

Տասերկու պատարագ էրէք:

Իմ կարմիր հաւկիթս դուրս բերէք,

ձերմակ հաւկիթս նեո տարէք:

Կամ՝

ձըռ, ճըռ, ճճեռնակ,

Աստու հալալ պիպեռնակ,

Ընկերս ընկաւ ծովը,

Ծովէն էլաւ ծիրանը.

Խունդ առէք, մոմ առէք,

Տասվերկու պատարագ էրէք,

Իմ կարմիր հաւկիթս դուրս բերէք:

Տնեցիները սովորաբար հաւկիթ կամ հատիկ են տալիս: Հատիկը, որ այդ օրը ամէն տուն պատրաստում է, խաշած մաքուր ցորեն է, հետը քիչմիշ, շաքարի մանրունք և ընկուղ խառնած:

Օրհնուած ուռը խնոցու, կաթի մէջ են ձգում, որ առատ լինի:

Այդ օրը նշանած աղջկալ փոքրիկ տեգրները մի կամ երկու ապասի (20 կոպ.) առած գնում են հարսի տունը: Հարսը լուանում է այս տեգրիկի կամ ոտները և նոր գուլպայ հագցնում և կամ գլուխը և նոր արախշին ծածկում:

Տեգրները դնում են իրենց բերած դրամը տաշտի ավին, որ հարսը վերցնի:

Երեկոյեան, գունաբացուկից լետոյ քահանան քարոզ է խօսում բարեգործութեան մասին, որից լետոյ տիրացուները գրակալը դնում և գրում են ժողովրդի խոստացած նուէրները եկեղեցուն, որից դայանում է 10—12 կոտ գարի և ցորեն, միքանի ֆունտ ձէթ, խուճ և մոմ:

ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԶԱՐԱԹ

Չարչարանաց շաբաթում ժողովրդի ջերմեռանդութիւնը աւելի ևս զարգանում է և եկեղեցին գրեթէ միշտ լի է լինում:

Իմաստուն և լիմար կուսանաց տօնին աւագ տիրացուն տասը տոմսակ է պատրաստում, որոնցից հնգի վրայ իմաստուն, իսկ մնացածի վրայ լիմար խօսքերն է գրում: Տասը կուսանաց առակը կարդալիս, տասը երեխայ, առաւելապէս երգիչներից, շապիկ հագած կանգնում են դասը, գրակալի շուրջը, մի մի վառած մոմ ձեռներին: Դեռ Աւետարանը չաւարտած՝ աւագ տիրացուն մի ափսէի մէջ լցրած այգ տոմսերը՝ առաջարկում է այդ տասը երեխաներին առնելու: Իմաստութեան տոմսը վերցնողը սաստիկ ուրախանում է և իւր ձեռի մօմը մինչև ժամացոյցութեան աւարտը վառ պահում: Ուրախանում են և՛ նրա ծնողներն ու ազգականները, որովհետև հաւատում են, որ գուշակութիւնը ճիշտ է: Բայց վախ նրան, ում լիմար է գուրս եկել. իսկոյն նրա ձեռի մօմը մարում են և հէնց եկեղեցում ամէն կողմից նախատում նրան:

Չորեքշաբթի կէս գիշերին «ցաւիս վերջ» են ասում և մինչև միւս օրուայ ճաշի ժամերգութեան աւարտը լուռ մընում, որպէսզի այլ ևս ցաւ չունենան:

Աւագ հինգշաբթի օրը գլուխ չեն լուանում, որ չգրժ-

ւեն, սապոն չեն դործ ածում, որ կսկիծ չտեսնեն, եօթը հաւկիթ են խաշում և պահում զատկի կիրակի օրը ուտում, որ ատամները չցաւեն:

Երեկոյին, Ոսնյուայի ժամասացութեան ժամանակ գրեթէ ամէն մի տնուոր մի կամ երկու «խիար» (վարունգ, կըտոր), կարագ, միքանի հաւկիթ տանում է եկիղեցի և տալիս քահանային:

Քահանան այդ կարագի մի մասը օրհնում և բաժանում է ժամաւորներին, իսկ միւս, մեծ մասը և հաւկիթները, որ միքանի հարկը է լինում, տանում տուն:

Ոսնյուայի ժամանակ քահանան չոքում է սեղանի վանդակի առջև, ունենալով իւր երկու կողքին մի մի տիրացու, որոնցից մինը Աւետարան, իսկ միւսը խաչ է բռնած լինում: Քահանայի առջև դրւում է կոնքը, իսկ տիրացուները՝ մի մի ապսէ՝ խաչհամբոյր ձգելու համար: Նախ գլխի առաջաւոր և հարուստ մարդը, որ ամենից էլ առաջ է կանգնած լինում, մերկացնում է աջ ոտը և մեկնում քահանային: Վերջինս լուսնում է ոտը և միքիչ օրհնուած իւղ դնում վերան: Յետոյ սա համբուրում է Խաչն ու Աւետարանը և ամենաշատը հինգ կոպէկ խաչհամբոյր ձգում: Այսպէս՝ քահանան լուսնում է բոլոր ծերունիների ոտները, և երիտասարդների, կանանց ու երեխաների ձեռները և իւղ քսում, ստանալով մեծամասնութիւնից 1—2 կոպէկ խաչհամբոյր, որով և գոյանում է մօտ մի ըուրլի լիսուն կոպէկ:

Օրհնուած իւղը քսում են աչքերին և ճակատին, իրենց կամ անասունների ցաւած տեղին, որ լաւանայ, մի կտոր էլ իւղի կարասի մէջ են ձգում, որ «բէարէտքէտթով» լինի:

Գիշերային ժամերգութեան ժամանակ, մանաւանդ մօվերը հանգցրած միջոցին ահագին տնկարգութիւններ են տեղի ունենում: Քաղաքում շատ անգամ երիտասարդները բռնում համբուրում են աղջիկներին, հանդերձները միմեանց հետ կարում, կուռում, ծիծաղում և այլն:

Միւսնոյն գիշերը դարբինները մի ոտի վրայ կանգնած, բոլորովին լուռ՝ եօթ ամրոցի դռներից հաւաքած երկաթից

շինում են ապարանջաններ, փոքրիկ մատանիներ, որ անժըմի են կոչւում: Միւս օրը այդ բոլորը եկեղեցու դռանը անխօս կանգնած վաճառում են: Անժըմին քաշ են տնում երեխաների օրօրոցից, իսկ ապարանջանները դնում աղջիկների և կանանց թւեքը, որպէսզի ամէն չարից ազատուին:

Աւագ ուրբաթին կոչում են սուգ ուրբաթ: Այդ օրը մինչև ճաշ տօն են պահում, իսկ ճաշից յետոյ կանայք կար անում, տղամարդիկ արօր քշում, դարբինները մեխ ծեծում, Յուդայի աչքը փորելու նպատակով:

Սեկայն այդ օրը ոստայնանկները չեն գործում, որովհետեւ եղեգն են տուել Քրիստոսի ձեռքը, դարբինները չեն աշխատում, որովհետեւ մուրճով են բւեւել Տիրոջը, Հիւսնները չեն տաշում, որովհետեւ Քրիստոսի խաչափալու տաշել են: Եկեղեցում երեսներին չեն խաչահանում, որովհետեւ ինքը Քրիստոսը խաչուած է: Ծուներ չեն դնում, որովհետեւ Քրիստոս խաչին, իսկ Յուդան գետնին է, համբուրողը Յուդային է համբուրում:

Ձ Ա Տ Ի Կ

Շաբաթ օրը ժողովրդի մեծ մասը ծոմ է պահում և անհամբերութեամբ սպասում ժամերգութեան: Շատերն էլ գնում են քահանայի մօտ և ստիպում նրան շուտով սկսել ժամերգութիւնը, այնպէս որ շատ գիւղերում ժամը 4-ին արդէն պասերը լուծած, պրծած են լինում:

Այդ երեկոյի պատարագն էլ մինը «առած» է լինում, և քահանան, երեցփոխը, տանուաէրը և ուրիշներ գնում են դրա տունը՝ ընթերելու: Պասերը բանում են հաւկիթով և ելնում, նայում արեւին, որ «արեւով ուտեն»:

Ս. Յարութեան գիշերը ծնուողին եղունկ-աշելու շնորհքով օժտուած են համարում: Նրա հալըը իսկոյն մի գառ է մատղում և նրա թիակները պահում, մինչև որ նորածինը

մեծանալով՝ կարողանում է աջ թիակի վրայ նախել և տեսնել կորած կամ զողացուած իրերի տեղերը:

Կիրակի վաղ առաւօտեան, երբ ժողովրդեան կարծիքով նահատակների վրայ լոյս է իջնում, գնում գերեզմանների վրայ մոմեր են վառում:

Պատարագի ժամանակ նշանուած աղջիկների ձեռքը տալիս են «չաթալ» մոմ: Սա մի ձուռի վրայ խփած մոմ է, որի վրայ ուրիշ չորս մոմեր էլ են ամրացրած:

Կիրակի օրուայ պատարագը ևս մինի հին և նոր նընջեցեալների հոգու փրկութեան համար է մատուցուած լինում, և գրեթէ գիւղի մեծ մասը նրա տանն են կատարում Ձատիկը:

Հացից յետոյ քահանան շտապում է օրհնելու տները: Այստեղ «տուն» բաժնում, խոնջի վրայ դրուած է լինում թթխմոր, աղ, խունկ, հացահատիկներ, ջուր և այլն, իսկ խոնջի տակ՝ քաքոր, հաւկիթ և այլն, որպէսզի սրանք ևս օրհնուին և շտաանան:

Այնուհետեւ գնում են միմեանց տուն Ձատիկը շնորհաւորելու. «Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց».— «օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի» ասում, ձեռք տալիս և համբուրում: Կանալք էլ նոյն կերպ շնորհաւորում են, իրենցից տարիքաւորների ձեռքը համբուրում, սրանք էլ նրա ճակատն են համբուրում. իսկ հասակակիցների հետ համբուրում են:

Ձատիկը շնորհաւորելուց յետոյ խումբ խումբ հաւաքւում են կտուրները և հաւկիթ կռուեցնում, մանաւանդ երիտասարդներն ու երեխաները:

Նշանած աղջիկներին փայ են բերած լինում և սրանց տանը կեր ու խումբ, խօսքն ու ծաղրը անպակաս է լինում: Շուտով գալիս է և զուռնան, ու ամբողջ գիւղը կլոր պար բռնում սրանց կալերում:

Միւս օրը մեռելոց է. բոլորը, բացի աղջիկներից ու հարսերից, գնում են գերեզմանատուն, որ սովորաբար գիւղի մի կողմն է լինում, մէկուսի ընկած, և օրհնել տալիս գերեզմանները: Շատերը իբր ննջեցեալների բաժին տանում

են իրենց հետ փլաւ, տապկած կարտոֆիլ, հաւկիթ, մեղր, և քահանայի ու աղքատների հետ ուտում գերեզմանի մօտ:

Ձատկից մինչև համբարձում, երեկոյեան ժամերգութիւնից յետոյ այլ ևս չեն գործում, որ «հաւկուր» չլինին, այսինքն չգրկուին արևը մայր մտնելուց յետոյ տեսնելու կարողութիւնից:

ՄԱՅԻՍԻ 7-Ը

Այս օրը ամբողջ գաւառի համար ուրախութեան և «սէլրանի» օր է: Դեռ սրտ նախորդ օրը տանտիկիները շինում են եօթական քաքոր և դնում կտուրը, որպէսզի այդ օրը, մայիսի 7-ին, նայեն, թէ դրանց տակից որդեր պիտի դուրս գան թէ ոչ, որովհետև հաւատում են, որ եթէ դուրս գան, տարին «դովըթուոր» կը լինի:

Ուրիշներն էլ մի գդալ են ձգում հերդիկից ներս. եթէ բերնի վրայ է ընկնում, ասում են, թէ թանգութիւն է լինելու, իսկ եթէ մէջքին, էժանութիւն:

Եթէ այդ օրը անձրև է գալիս, աղջիկներն ու հարսերը հերարձակ կանգնում են անձրևի տակ, որպէսզի մազերը երկարին: Միքանիսն էլ այդ անձրևի ջուրը կաթի մէջ են ածում, լուսալով, որ կը մակարթուի: Այդ օրուայ անձրևը շատ առողջարար է, և ծովերի վրայ թափուելով՝ մարգարիտ է դառնում, որովհետև Եղիա մարգարէի արցունքներն է: Այդ օրը թէ աղամարդիկ և թէ կանայք աշխատում են լողանալ, որովհետև բոլոր ջրերը այդ օրը սաստիկ առողջարար են համարւում և կարող են ամէն տեսակ հիւանդութիւններից բժշկել: Այդ օրը լողանում են նաև՝ փերիները, լողանում է և՛ նրանց պահապան ծերունին: Սակայն սա ջուրը մտնելուց առաջ, վերցնում է իւր գլխարկը—սրբիւլլան—որի շնորհով նա աներևութ է դառնում և դնում ջուր խմելու եկած կովերից մինի գլխին, երկու պողբերի միջև, ո-

րովհետեւ եթէ գետնին գնի՝ «թըլըսումը» կը կորցնէ: Եւ որովհետեւ փերինները և սրանց հետ նրանց պահապանը երկար լողանում են, ուստի կովերը վերադառնում են, տանելով իրենց հետ գտակը: Եւ եթէ մէկը, նախընթաց վերադառնալիս մի ոտի վրայ եօթն անգամ պառլտ տալ, կարող է տեսնել ամենից առաջ եկող կովի պողպատի միջև դըրուած ալդ սրբիւլլան: Կարիշ տղան կարող է խել ալդ գըլխարկը և փախչել, միայն կովը կ'ընկնի նրա հետեւից և եթէ հասնի, կը խփէ նրան իւր պողպատով: Անմիջապէս սրբիւլլան ձեռքից կերթալ և կովի խփած տեղն էլ միշտ ծակ կը մընալ, ինչքան էլ որ նոր շոր հագնի: Բայց եթէ կովը չհասնի տղային, սրբիւլլահը կը մնալ իրեն և աներևութանալ: Կարող է ծածկել այն և աներևութանալ:

Բաւական մեծ դեր խաղում են ալդ օրը և՛ պոչուոր պառաւանները:

Ալդ օրը Ախալքալաքի և շրջակայ գիւղերի բնակիչները ուխտ են գալիս Ախալքալաքի արեւելեան ձորում, գետի ափին դտնուած «ձգնաւորի Վանքը»:

ՀԱՄԱԵՐՁՈՒՄ

Ամբողջ գաւառը համարձման «կաթնապրի օր» է կոչում և ամէն տուն ալդ օրը կաթնապուր եփում:

Դրա նախորդ, չորեքշաբթի օրը, շատ վաղ, դեռ արշալոյսը չծագած՝ աղջիկները գնում են սարերը և վիճակի երգեր երգելով՝ ծաղիկներ հաւաքում: Յետոյ մի կճուճի մէջ եօթ աղբիւրից ջուր և եօթական քար ու մի քիչ էլ ծաղիկ թերթեր են լցնում: Ապա ծաղիկները գովելով մի մեծ փունջ են կապում, գնում կճուճի բերնին, փոքրիկ փնջերով էլ շուրջը զարդարում: Երեկոյեան, երբ աստղերը ելնում են, ալդ կճուճը գնում են «աստղերի տակ» — բացօթեալ մի տեղ:

Նոյն օրը կանալք պասմալի (քաբորի շերտ) մէջ կող-

պած կողպէք են ձգում և կամ չափում և նշնում են մի որևէ խոտի բարձրութիւն: Միւս օրը, Հինգշաբթի, հանում են կողպէքը և նալում.— եթէ ինքն իրեն բացուած է լինում, ալդ նշան է, որ ալդ տարին յաջողութեամբ պիտի անցկացնեն, իսկ եթէ փակ է մնացել, անյաջողութիւնը և հիւանդութիւնը պատելու են իրենց: Միւսներն էլ չափած խոտն են դնում, որ եթէ երկարացած լինի՝ բաղդաւորութեան, իսկ եթէ նոյնը մնացած՝ անբաղդութեան նշան է: Ալդ օրը նորահարսերն ու նորատի կանայք Ծաղկամօր կիրակի են պահում, որպէսզի Ծաղկամարը, որ միքանիսի ասելով Վառվառէ կոյսն է, պահպանէ երեխաներին ծաղիկ և կարմրուկ հիւանդութիւններից:

Վիճկըտը (վիճակ հանող) աղջիկները խմբովին վիճակը— նախընթաց երեկոյին պատրաստած կճուճը—ինչպէս և՛ սալի մէջ դրուած ծաղիկի փնջեր ձեռքերին պտտում են տները և ջուր, աւազ ու ծաղիկ փնջեր բաժանում: Տնեցիներն ալդ ջուրն ու աւազը լցնում են խնոցին, որ կարագ շատ լինի և յետոյ մի որևէ նշան, օր. բալանի, կօճակ, մատանի և այլն, ձգում վիճակի մէջ, որ իրենց համար էլ վիճակ հանեն: Սրանից յետոյ աղջիկներին էլ տալիս են պանիր, հաւկիթ, կաթ: Վիճկըտները երբ այսպիսով բաւական բան հաւաքում են, գնում են իրենցից մինի տունը, ալդ պաշարեղէնով կերակուր եփում, ուտում, խաղում, երգում և պարում:

Վիճակը մնում է այս տանը մինչև միւս, «դէմի» հինգշաբթին, երբ հաւաքւում են մի ծաղկալից դաշտ և կամ մի կալ. աղջիկներից մինը դառնում է հարս, այսինքն բոլորովին լուռ նստում է, առնում վիճակը գիրկը և երեսը ծածկում մի քողով: Միւս աղջիկները նստում են նրա շուրջը և խմբով վիճակի երգեր երգում: Իւրաքանչիւր երգից յետոյ հարսը վիճակի միջից մի նշան է հանում, որը և՛ տալիս են տիրոջը, միանգամայն երգուած կտորից գուշակութիւններ անելով: Երբեմն էլ երիտասարդների խմբեր գալիս են երգով մրցե-

լու աղջիկների խմբի հետ և փոփոխակի երգելով աւելի շուք տալիս հանգիսին, որ սովորաբար պարով է աւարտուում:

Ժողովուրդը հաւատում է, թէ լոյս հինգշաբթի, կէս գիշերին, բոլոր ծաղիկներն ու խոտերը սկսում են միմեանց հետ խօսիլ և ասել, թէ իրենք ինչ ցաւի դեղ են կամ իրենց արմատի մօտ քնչ կայ: Եւ ով շահմար օձին խփում, երկու հաւասար մաս անում ու պոչի կողմինը ուտում է՝ նա շնորհ է ստանում այդ ծաղիկների լեզուն հասկանալու: Այսպէս՝ Լոխմանին, որ կերել էր շահմար օձի մի մասը, շատ լաւ հասկանում էր ծաղիկների լեզուն: Սա մի անգամ իւր աշակերտների հետ այդ երեկոյ ծաղիկներ է ժողովելիս եղել: Աշակերտներից մինը, որ ցոյց էր տալիս թէ ոչինչ չի հասկանում, մենչդեռ ամէն ինչ հասկանում էր, վերցնում է մի ծաղիկ: Իսկոյն Լոխմանին, որ չէր կամենում աշակերտներին բան սովորեցնել՝ միակ գիտունը մնալու տենչով, հասկանում է, որ նա արդէն բաւական բան է սովորել, խփում, սպանում է նրան:

ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառին, Ժողովրդի բարբառով Վարդեօրին, միմեանց վրայ ջուր են սրսկում, «Վարդեօր անումա: Ուրիշներ աղաւնիներ են թռցնում և կամ զոհում: Քաղաքում վարդի մեծ փնջեր կապած տանում են եկեղեցի և դնում սեղանի առաջ:

Պատահում է, որ հասարակութիւնը մի կամ երկու եզ է մատողում, սակայն այս գաւառում այս առիթով մի առանձին ծէս չի կատարուում:

Ս. ԳԵՈՐԳ

Այս տօնը ժողովրդի բարբառով կոչւում է ծնատօն։ Այդ օրը ո՛չ ոք բան չի անում, վախենալով որ կը ծռուի։ Պատմում են, թէ շատերը բան են արել և անմիջապէս ձեռքերը, ոտները և ալլն ծռուել են։ Եթէ ստիպուած են մի բան անելու, պատժից ազատուելու նպատակով գործից անմիջապէս լետու մի քիչ գարի են ցանում։ Հաւատացնում են, թէ այդ ցանուած գարին ծուռն է դուրս գալիս, կրելով իւր վրա՝ Ս. Գէորգի պատիժը։